

5258

# ՊՐՈԼԵՏԱՐ՝Ի

ԳԵՂԱՌԿԵՍԱԿԱԿԱՆ ԲԱՂԱԲԱԿԱՆ  
ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՓՐԱԴԱՐԱՆ

Բ. ԲԻԲԼԵՅՎԻԼԻ

## Կ Ա Մ Ո

(ՀԱՏՎԱԾՆԵՐ)



ԹԻՒՆԻՍ

1935

ՃԱՊՈՂ.

Կ-18բ.





3K71a

4-12p

1 0 AUG 2005

1 DEC 2009

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈՂՈՐ ՆԵՐՎՐՆԵՐԻ, ՄԻՆՆԵՐ!

«ՊՐՈԼԵՏԱՐ»  
 ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱԿԵ ԶԱՆԱԶԱԿԱԿԵ  
 ՄԱՍՍԱՅԱԿԱԿԵ ԳՐԱԴԱՐԱՆԵ

Բ. ԲԻԲԻՆԵՅՇՎԻԼԻ

899.962-39

ВЕРНО ПОСЛЕДОВАТЕЛЬНО ТСС.Р.  
 М.Н. 618 2

Կ Ա Մ Ո

(ՀԱՏՎԱԾՆԵՐ)



Գառ. խօրհանգրվ. Ա. Պ. Վարդանյան  
Սրբազրիչ և թողարկիչ՝ Ս. Դովլարյան

## ԱՌԱՋԻՆ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Կառնոն հաճախ ստիպված եր լինում կատարել  
փասնագիտոր հանձնարարություններ և նա միշտ պատ-  
վով եր դուրս դալիս դժվարություններից : Նա անսպաս-  
հնարադետ եր : Նրա գաղտնապահությունը (կոնսպիրա-  
ցիա) տարբերվում եր յերգիծանքի ինչ վոր յուրատե-  
սակ դժերով : միշտ գաղտնապահ, նա ամեն անգամ  
ընդդժում եր իր հաղթանակը հիմարացված թշնամու  
հանդեպ : Յերիտասարդ կամոյի համարձակությունը  
և հնարագիտությունների հարստությունն այն ժա-  
մանակ արդեն դրավում եյին ընկերների ուշադրու-  
թյունը :

Ահա թե ինչպես ե պատմում ընկ . Անետա Սու-  
լակվեղիձեն կամոյի հեղափոխական աշխատանքի մա-  
սին՝ նրա առաջին ձերբակալություն ժամանակաշը-  
ջանում (1903 թ.) :

«Կամոյին յես տեսա Բուլթալիում : Նա իր յե-  
ռանդուն և ուրախ արտաքինով թողնում եր շատ հա-  
ձելի տպավորություն : Կառնոն հանաքի ձևով պատմում  
եր ընկերներից մեկին իր արկածների մասին, վորոնք  
սակայն ունեյին շատ լուրջ հեղափոխական նշանակու-  
թյուն և բնորոշում եյին նրան իրրև անվեհեր մարդու :  
Մի անգամ նա մանր սպեկուլյանտի զգեստ հագած տա  
նում եր անլեզալ դրականություն թիֆլիսից-Բուլթա-  
լիս : Կայարանում նա ընդունում ե ինչ վոր անպետք բա-  
ներ, վորպեսզի մի փոքր հեռու վաճառի գնածը, այն  
ել անպայման վաստակով :

Մի անգամ կուսակցական գործերով յես գնում  
եյի Բուլթալիսից - Թիֆլիս : Վերադարձին, Սաշուրի



43224.63

Ա. Յ. Մյանսիկյանի անվ. տպ. եր. «Զարյա Վոստոկայի»

Գառվեր 861

Գլավլիտ Բ-4600

քանակ 2000



կայարանում (այժմ Ստալինիսի), յես մտա բուժեա՝ ջուր խմելու: Հանկարծ յերելում ե մի ինչ վոր կին-տա՝ լայն շարվարով և փսփսում ականջիս խորհրդ-դավոր կերպով «չե՞ս ճանաչում, մտիր այս ինչ վա-զոնը»:

Սկզբում յես ուղեցի բարկանալ, ընդունելով այդ ամենն ինչ վոր անձանով կինտոյի հանաք: Չե՞ վոր նրանք հայտնի յեն Վրաստանում այնպես, ինչպես Փարիզում-գամենները: Բայց հետո գլխի ընկա, վոր այստեղ մի բան կա և մտա ինձ ցույց տված վազոնը: Ուշադրությամբ նայելով կինտոյի դեմքին. յես ճա-նաչեցի Կամոյին և ձեացնելով, թե ծանոթ չեմ նրա հետ, նստեցի»:

Իր դերը Կամոն խաղում էր վարպետորեն: Կա-մոն տանում էր մի մեծ բաց զամբյուղ դեղձով լի, իսկ դեղձերի տակ կար անլեզալ գրականություն: Կամոն, անկասկած, տաղանդավոր արտիստ էր: Յեվ նա վոչ միայն իր դործի արտիստն էր, այլ և կարողանում էր վերափոխվել, ընդունելով ցանկա-ցած կերպարանքը, ծածկելով ուղամբ դիմակը և յե-րելում էր ժանդարմների առաջ կամ կինտոյի կեր-պարանքով, կամ իշխանի, ուսանողի և կամ վրացի գյուղացու տեսքով: Յեվ վոչ մի անգամ նա չմտա-նեց իրեն: Հեղափոխական աշխատանքի մեջ փորձա-ուսելոյունն ավելացնելու չափով՝ այդ գիծը նրա մեջ ժամանակին ավելի ամրացավ ու զարգացավ: Դա փրկում էր նրան հաճախ այնպիսի դեպքերում, վո-րոնք թլվում էին միանգամայն անհուսալի: Բայց ահա հասավ այն րոպեն, յերբ Կամոյին վիճակից առաջին անգամ մոտեց բանտը: Դա 1903 թվին էր:

Այդ դեպքն իշխանությունների տեսակետից նկա-րագրված է դատական քննիչ Մալինովսիու արձա-նագրության մեջ 1908 թ. հուլիսի 30-ին, ըստ վո-րում՝ այդ արձանագրությունը կազմված է ձերբա-կալության փաստից բավական հետո: Բայց հետա-բերբեր են իրեն՝ Կամոյի հիշողությունները:

«Աչնանը պետք էր աշխատանքի համար մեկնել Բաթում: Ամենուրեք վխտում էին ոտն չափկներէ խմբեր: Շատերին ձերբակալում էին. ի միջի այլոց բանտարկված էր նա, ով պետք է վերցներ տղա-բանը և ինձ դրամ տար. այնպես վոր յես գրամ չը-ստացա: Յես նշանակված էի փոխադրող և Բազվից Գուլթալիս պիտի հասցնեյի յերեք փութ գրականու-թյուն. «Պրոլետարիատի պայքարը»՝ ուսերեն, ճա-յերեն և վրացերեն լեզուներով. պատմում է Կամոն: Ճամբորդելու համար ընկերներս տալիս էին ինձ 25 ուրբլի և միշտ զարմանում իմ հաշվետվու-թյուններից, թե յես ինչպես էի կարողանում քիչ ծախսել: Տոմսն-արժեք 4 ուրբլի:

Յես այն կողմը մեկնում էի տոմսով, իսկ վե-րադառնում՝ նստարանի տակ: Ճամբորդության ըն-թացքում յես ճաշում էի վոչ ավելի, քան մեկ ան-դամ յեվ սովորականի նման միշտ քաղցած ե-ի լինում: Մի անգամ յես բարեաջող կերպով Բաթումից - Գուլթալիս բերեցի 5 փութ գրականու-թյուն, տառեր և տպագրական դադգյահ: Ժամը 4-ին յես մտա ծանոթ բժշկի մոտ, ուր ինձ կուշտ կեյա-կրեցին և հնարավորություն տվին քնելու: Շատ ճնշող էր ինձ համար, վոր ինձ նման կեղտոտին ու հոտածին տեղավորել էին կահավորված՝ առանձնա-սենյակում: Յես պիտի վերադառնայի Բաթում: Ընկերս ինձ համար դնեց կոստյում և, հազուադաս փոխելով, յես դարձա իսկական ջենտլմեն:

Բաթումում շատ մաքսանենդներ կային և այդ պատճառով խստորեն հետևում էին: Յես պետք է գրականությունը հասցնեյի մի բանվորի, վորն աշ-խատում էր Ռոսալիլի ձուլման ցեխում: Գիշերվա ժամը 11-ին յես տարա ծանրոցը՝ վրաս դցած: Թեև յես բավական կանոնավոր էի հաղնված, բայց և այն-պես ժանդարմներն ինձ հետապնդեցին: Նրանցից մե-կըն ինձ կանգնեցրեց: Տեսնելով, վոր իմ ծանրոցը բացառապես թղթերից է բաղկացած, տարավ ինձ



վրասիկանատուն. ճանապարհին յես նրան դրամ խոստացա՛յ այն հաշվով, վորպեսզի նա ինձ բաց թողնի:



Կամոն շղթայակալ.

Սկզբում նրան առաջարկեցի 15 ուրբլի, հետո՝ 20 և վերջապես այն բոլորը, ինչքան յես ունեյի — 25 ուրբլի: Բայց ժանդարմը դրամը չվերցրեց և ինձ հանձնեց վրասիկանութան: Ինձ մոտ կար դրահանություն Ալեքսանդր\*) թաղավորի դեպի Իտալիա մեկնելու և Սերաֆիմ Սորովսկու մասին: Ինձ ձերբակալեցին և ուզում էյին ծեծել, բայց յես աղմուկ բարձրացրի և ինձ հանգիստ թողին:

Բացի դրահանությունից, ինձ մոտ կար նաև չափազանց վարկարեկող նամակ: Կարող էյին ձերբակալել այն ընկերոջը, վորին նամակը հասցեյագրված էր: Ինձ աջողվեց գողանալ այն սեղանից և կուլ տալ: Յերբ ոտամիտարը գլխի ընկավ, վոր կապույտ ծրարի մեջ կար նաև նամակ, յես սկսեցի նրան համոզել, վոր նամակ չի յեղել և վոր նա հեռագրական կապույտ բլանկներն է ընդունել ծրարի տեղ: Այդպիսով ժանդարմները նամակը չգտան:

Գիշերն ինձ տեղափոխեցին Բաթումի բանտը: Ինձ ուղեկցում էյին չորս ժանդարմ. ճանապարհին ծրկվելու հույսս չարդարացավ: Նստեցրին միայնակ և այդպես չորս ամիս նստած մնացի:

Վոչ վոքի ինձ մոտ չեյին թողնում: Նման պայմաններում փախուստն անհնարին էր: Յես խնդրեցի, վոր ինձ փոխադրեն ընդհանուր կամերան, և չուտով այդ ինձ աջողվեց: Ընդհանուր կամերան ընկնելով, սկսեցի շրջահայաց լինել: Բանտի բակի չորս կողմի պատերն այնքան էլ բարձր չեյին՝ մոտ 7 արշին: Մի կողմից դիմնադիան էր, իսկ մյուս կողմից՝ բուլվարը: Յես ընկերներին սկսեցի փախուստի տրամադրել, բայց նրանք ինձ վրա ծիծաղում էյին. «ե, ինչ կա վոր, պատից կթոչես, իսկ այնտեղ միևնույն է, քեզ պահակը կբռնի»:

\*) Վոչ թե Ալեքսանդր, այլ Նիկոլայ 2-րդ թաղավորի՝ — Բ. Բ.



Բանտում քաղաքականներ շատ կային և նրանք իրենց ազատ ելին պահում: Ինչպես յեղավ, մի անգամ նույնիսկ բանտը վոստիկանութիւն կանչվեց:

Ինձ ձերբակալելիս յես ցուցմունք տվի, վոր յես Գորի քաղաքի բնակիչ եմ յեվ այնտեղից դուրս եմ յեկել ծառայութիւն փնտրելու հույսով: Իմ անձնագրում նշանակված չեր իմ բնակավայրը: Յես պնդում եյի, թե ճամբրուկը գրականութեամբ ինձ տվել է ինչ վոր մի մարդ, խնդրելով ողնել իրեն՝ տեղ հասցնելու, ինքը թագնովել աննկատելիորեն, իսկ յես վոր մի բանում հանցավոր չլինելով, բռնվել եմ:

Այս բոլորը հարմար դեպքում յես կրկնեցի և վոստիկանապետի մոտ: Այն ժամանակ նա իմ մասին հարցմունք ուղղեց հորս: Հայրս պատասխանել էր, վոր յես արդեն յերեք տարի յե ինչ անհայտ ուղղութեամբ կորել եմ: Յերբ յես հետադայում հարցրի հորս, թե ինչու յե նա այդպես պատասխանել և խանդարել ինձ ազատութիւն ձեռք բերելու, հայրս ասաց.—«Ինչ է, քու պատճառով աստճու և թագավորի առաջ յես պիտի ստե՞մ»:

Ինձ սպանում եյին աքսորով. յես խնդրեցի վոստիկանապետին խղճալ իմ խեղճ քույրերին և ներել ինձ: Յեվ սրան կից ասացի, վոր Նիկոլայ թագավորն այդ անարդարութիւնից կքարանա զահի վրա:

Վոստիկանապետը խիտ կերպով հրամայեց հիմարութիւններ դուրս չտալ: Այստեղ ինձ պաշտպանողների դերում հանդես յեկան ընկերներս: Նրանք սկսեցին հարձակվել վոստիկանապետի վրա գոռալով, թե նա վիրավորել է իրենց ընկերոջը «դուրս տալ»

խոսքով: Վոստիկանապետն ստիպված յեղավ ներողութիւն խնդրել: Նա այն կարծիքին էր հանդէլ, վոր իմ ընկերները վատ ազդեցութիւն են ունենում ձերբակալվածների վրա և նրանց այդ բանտից տեղափոխեցին: Մեզ, իբր ավելի պակաս վտանգավոր թվացողների, թողին մեր տեղում:

Յես բաշխում եյի այն մթերքները, վոր մեզ էյին ուղարկում կիրակի օրերը—խոճկորներ, սառեր, բադեր: Վերջին հաշվով մենք շատ լավ էյինք սնվում բանտում»:



## Փ Ա Խ Ո Ւ Ս Տ

«Հասավ, ինչպես ինձ թվում էր, հարմար ըուպեն։ Մութ դիշեր եր. անձրև եր դալիս։ Բանտի առաջ կանգնած եր միայն մի զինվոր։ Վոչ արևմտյան, վոչ ել արևելյան կողմում պահակներ չկային։ Չինվորին հրամայված եր կրակել, թույլ չտալով վոչ վորքի մի սաժեն անգամ մոտենա պատին։ Յես փորձեցի բարձրանալ պատի վրա, բայց մյուս կողմում կանգնած եր ժանդարմը, և յես ստիպված յեղա վերադառնալ նույն բանտասենյակը։»

Սակայն, յես չհրաժարվեցի փախուստից։ Վորովհետև յես հիվանդ եյի Չերմախտով, ուստի բըժիշկն ինձ թույլատրեց զբոսնել վաղ առավոտյան։ Մի պայծառ արևոտ առավոտ յես զբոսնում եյի և հետևում զինվորի սովերին, վորն զբաղված եր հարևան բակի խողերով։ Այդ խողերին բանտարկյալները սովորեցրել եյին զանազան խաղերի։ Ընտրելով հարմար ըուպե, յես վազեցի, թոա պատի վրայով և ընկա. բարձրանալ դժվար եր, բայց և այնպես յես իսկույն վորքի կանգնեցի և սկսեցի նայել, թե ուր ե սահմանապահ խումբը։ Յես ինձ հետ միշտ ունեյի հայելի. հանեցի հայելին զբայանիցս, չիեցի թշերս, վորպեսզի այնպես գունատ չերևան, ուղղեցի բաձկնակս և, ըստ հնարավորութեան, հանդիստ զնացի դեպի փողոցի անկյունը։ Այդտեղ կանգնած եր ինչ վոր յերեխա։ Նա հարցրեց ինձ—ժամը քանի՞սն է, իսկ յես խնդրեցի նրան կառք գտնել ինձ. համար։

Հանկարծ տեսնում եմ փողոցով վազում են յերկու մարդ։ Ո՛րը թաղնվել։ Յես տեսա փողոցի աջ կողմ

մում բաց դռներ և, վտանդից խուսափելու համար, մոտեցա այդ դռներին։ Բայց ամեն ինչ անցավ աջող։ Այդ մարդիկ վազում եյին իրենց դորձերով։ Յես հանդիստ կառք նստեցի և գնացի այն հասցեյով, վոր ստացել եյի բանտում։ Այնտեղ ինձ դիմաւորող ընկերներն այնպես ուրախացան, վոր կամենում եյին վճարել կառապանին մի ուրբի։ Յես հազիվ կարողացա համոզել նրանց այդ չանել, վորպեսզի կասկածներ չծաղեն, և վճարել ինչպես պայմանավորված է՝ 30 կոպեկ։

Յես չեյի սափրվել, իսկ սափրվել վարսափրանոցում, վտանգավոր եր։ Ընկերները ցեխ բերին, յես քսեցի յերեսիս և դեմքիս մաղերն ամբողջովին իջան։ Յերբեք չեմ մոռանա ազատութեան այն հրաշալի զգացմունքը, վոր զգացի յերբ թոա պատի վրայով։ Արեւը փայլում էր, մոտիկում ծովը ճոճվում էր և —ազատութուն, լիակատար ազատութուն բանտից հետո։ Կամենում եյի վազել, բայց վազել յես վախենում եյի, ուժ տվի իմ տեսողութեան, շարունակ սպասում եյի, թե մի գուցե վորևէ մեկը ճանաչե ինձ։ Յերբեք յես չեմ ապրել ուրախութեան այդպիսի զգացմունք։

1-2 ժամ հետո դալիս ե փաստաբանն՝ ինձ հարցաքննելու համար։ Բանտարկյալները, վորոնք չեյին սիրում բանտային ծառայողներից մեկին, ասացին, թե նա ինձ բաց թողեց, և այդ ծառայողը զրկվեց պաշտոնից։ Վստտիկանապետը, իմանալով իմ փախուստի մասին, խիստ հայեցում ե և խոստովանում, վոր նա խաբվել է իմ վերաբերմամբ, համարելով ինձ համեստ։ «Յես ուրիշներին տեղափոխեցի, վորպեսզի չիչացնեն նրան։ Նա ամազակ եր և վոչ թե քաղաքական բանտարկյալ։ Վորտե՞ղ ե տեսնված, վոր քաղաքական բանտարկյալները փախչեն բանտից»։



Մի շաբաթ հետո, հոկտեմբերի 1-ի տոնին՝ յես հագա նոր չերքեզկա, ներկեցի մաղերս և դնացի կայարան՝ ինձ ուղեկցող բուլչեիկյան կաղմակերպու-



Կամոն կինոայլի հագուստով:

թյան անդամ՝ վանո Կալանդաձեյի և Ելիսո Լոմինաձեյի հետ: Յես աջողությամբ հասա Թիֆլիս, ուր կրկին տեսա ինձ ձերբակալող ժանդարմին. նա փոխադրված էր այստեղ բարձր պաշտոնով:

Յես Թիֆլիս հասա յեկեղեցական տոնի օրը: Գնացքը լի յեր վրացի իշխաններով, կար և նվազ. ամենքը հարբած էյին: Յես ինձ անվանեցի իմերեթցի իշխան: Սկսեցին ինձ սիրաշահել, իսկ յես նվազում էյի զուռնայի վրա: Յերը մենք մտանում էյինք Թիֆլիսի կայարանին, յես վեճի բռնվեցի մի իշխանի հետ, թե նա չի կարող վոչ մի կերպ անցնել կայարանի տախտակամածով, զուռնա նվազելով: Նա կամենում էր ափսոսանք տանել զբազը. անցավ զուռնայով, ամբոխը նրա յետևից, իսկ յես ողալվեցի իրարանցումից, կառք վարձեցի և անհայտացա: Ամենքն Աղաղակում են, հարցնում՝ «ո՞ւր ե իշխանը, իսկ իշխանն անհայտացավ»:

Բաթումի բանտում Կամոյի դռնվելու մասին ընկ. Ի. Պելցովը հիշում է հետևյալը.

«Յես հանդիպեցի Կամոյի հետ 1903 թվի հուլիսին: Յես Բաթումի բանտն ընկա չորրորդ փոստիկանատանը մի շաբաթ հարցաքննվելուց հետո: Յես մեղադրվում էյի այն բանում, թե Պասսեկի զործարանի զործադուլի դրդիչն եմ յեղել և մասնակցել եմ պրովոկատոր ու շտրեյկբրեխեր Ալեքսանդրովի դեմ կատարված մահափորձին: Այն ժամանակ յես մոտ 17 տարեկան էյի: Իմ գլխում դեռ խմորվում էյին ամեն տեսակ նախապաշարմունքներ, վորոնք մնացել էյին յերեխայությունից: Յես դեռ հավատում էյի աստծուն և նույնիսկ բանաստենյակում կրծքիս վրա խաչ էյի կրում:

Յերկար հարց ու փորձից հետո, թե ինչպե՞ս յես բանտ ընկա, ինչի՞ մեջ եմ մեղադրվում, ինչպե՞ս ե անցնում զործադուլը և այլն, ընկ. Կամոն ուշադրություն դարձրեց իմ խաչի վրա: Նա շատ զգուշ չէ



քանի որ շարունակ զրուցում եր ինձ հետ խաչի ծագման, նրա նշանակութեան և այն մասին, թե ով եր Քրիստոսը: Նրա առարկութիւնները կրօնի դեմ թողին ինձ վրա մեծ տպավորութիւն, իսկ առանձնապես նա հարկածում եր ինձ տերտերներէ-հավատի ու ցարի այդ նեցուկների կյանքի պատկերներով:

Սկզբում յես ջերմ պաշտպանվում եյի, հանելով իմ հին զինանոցից նորանոր պատճառաբանութիւններ, վորոնց նա ջախջախում եր չչտապելով, բայց առանց վրիպելու:

Այդ զրույցների հետեանքով՝ յես համոզվեցի, վոր սուտ են իմ զիրքերը, և իմ վզից ծննդյան որից կախված խաչը նետեցի գիշերային անութիս մեջ-բանաստեղծակում գտնվողների ընդհանուր հավանութեամբ:

Յես հիշում եմ, ինչպես այժմ, թե ինչպե՛ս փայլեցին ընկ. Կամոյի աչքերը, թե ինչպիսի՛ ուրախութեամբ ու սիրով եյին լի նրանք: Նա համոզում եր ինձ, ապաղաչում բանվորների հետ զրուցելու ժամանակ զգուշորեն շոշափել աստծուն, չտաքանալ, համբերութեամբ լսել նրանց և միայն աստիճանաբար հավատափոխ անել նրանց, առանձնապես ողտաղործելով այդ զրույցների մեջ ընտելացնողները և հիմնովին պատրաստվելով այդ թեմաների համար: Կամոյի այդ նախազրուցումը հետո ինձ մեծ ոգուտ բերեց առանձնապես Բաթումում և Բաղվում աղանդավորների հետ վիճելիս:

Ընկ. Կամոյի հետ մի բանտասենյակում գտնվելու մեկ ամիսն անցավ համարյա աննկատելի վեճերով և զրույցներով:

Յերբ Կամոն փախավ բանտից, յես զրկվեցի շատ չավ ընկերոջից, ուսուցչից և անսովոր ուրախ մարդուց: Կամոն հազվադուրս եր մաղձի յենթարկվում: Նա յերազում եր շուտով հեռանալ բանտից և նորից

նետվել տնտեսական ու քաղաքական պայքարի ջրապտույտի մեջ:

Փախտաի լավ մտածված պլանը նա իրականացրեց փայլուն կերպով: Իր մտադրութիւնների մասին նա համարյա վոչ վոքի չեր ասում, գիտեյին միայն մի քանի ընկերներ, իսկ մեր բանտասենյակում կային մոտ 40 մարդ: Կամոյի փախտից հետո շատերը վախեցան, յերկյուղ եյին կրում ծնշումներից, դժգոհութիւն եյին հայտնում և անհանդիստ սպասում եյին յերեկոյան ստուգման: Բանը վերջացավ նրանով, վոր մեզ 3 որով զրկեցին հերթական զբոսանքներից:

Մեր բանտասենյակի պատերից մեկը կազմում եր բանտի դըսի պատի շարունակութեամբ, ուղղված դեպի արական դիմնադիան, իսկ դիմնադիայի բակն ու մոտակա փողոցը դատարկ եյին զբաղմունքներից հետո, այդ հանգամանքը չվրիպեց ընկ. Կամոյի ուշադրութիւնից:

Բանտասենյակի յերկաթե վանդակով վերջին պատուհանը բանտի պատից հեռու յեր մոտավորապես մի մետր և գետնից բարձր յերկու մետրով: Մենք զբոսնում եյինք մեր բանտասենյակի մոտ, պահապանը գտնվում եր բակի հակառակ կողմում և անցուղարձ եր անում ճյուս պատի մոտով: Յերբեմն նա մտնում եր մեր բանտասենյակի անկյունը, ըստ վորում՝ ցերեկվա ժամերին բակի մի մասը ծածկված եր լինում ստվերով:

Շենց այդ նկատի առավ ընկ. Կամոն: Ճաշի զբոսանքից հետո նա, վորսալով այն բոլակն, յերբ պահապան զինվորը մտել եր անկյունը, թոյով ըս-



կըզբում պատուհանի վրա և այնտեղից դեպի բանտի պատը: Այդ ամենը կատարվեց այնպես արագ, վոր նույնիսկ շատերը մեղանից չնկատեցին: Փախուստը յերեվան հանվեց միայն յերեկոյան, իսկ դա հնարավորութիւն ավեց ընկ. Կամույին հետքերը թաղցնել»:

Կամույի փախուստից անմիջապես հետո Վրաստանի բոլոր ծայրերն ուղարկվեցին վոստիկանական ու ժանդարմական զբուխները: Կապույտ վորսորդներն ընկան կարմիր վորսի յետեից:


### ԿԱՄՈՆ 1905 ԹՎԻՆ

13224-63

Յեկավ 1905 թիվը: Հեղափոխական շարժումն ընդգրկում է ժողովրդական մասսաներին, վորոնք ինչպես ԼԵՆԻՆԵՆ է ասում, կատարում են Հոկտեմբերի գլխավոր ռեպետիցիան: Ընկեր Կամոն իրեն ըզգում էր հեղափոխական վերելքի ալիքներում, ինչպես հարազատ տարերքի մեջ: Նախքան նրա կադմակերայական-տեխնիկական գործերի մասին խոսելը, մենք կսպառենք նրա կենսապրականը, ուր կա վորոշ նյութ 1905 թվի մասին:

«1905 թվին յես կառավարում էյի տպարանը՝ Սուլուկում, Բեհբուդյան փողոցում, բժիշկ Գոնիևի տանը: Հունվարյան գործադուլների ժամանակ մենք ստիպված էյինք աշխատել ամբողջ շաբաթներով անքուն: Մի գիշեր աշխատանքի ժամանակ, մի քանի անքուն գիշերներից հետո, յես դուրս յեկա մյուս սենյակը՝ թողլի բերելու: Այդ ժամանակ գրաշարներից մեկը՝ Պավել Ուրուշաձեն ձեռքը մեքենայի վրա դնելով քնել էր: Ինձ բոլորովին դուր չեկավ այն, վոր նրա մեջ բացակայում էր սովորույթյուն: Յես զարկեցի մեքենայի ինչ վոր մասի և փոքր ինչ սեղմեցի նրա ձեռքը: Ուրուշաձեն կամենում էր ինձ կշտամբել, յես նրան խիստ պատասխանեցի, թե իմ կարծիքով յերբ շատ գործ կա, չի կարելի քնել, այլ հարկավոր է աշխատել:

Իմ գրաշարներն ստանում էյին ամսական 20 ո., նրանք յերեք հոգի էյին: Մեկը վրացի-Ուրուշաձեն, մյուս յերկուսը հայեր-Վախտանգովը և Թևոֆիլը: Մի ամսից հետո Վախտանգովը թուրքական կոստյումի





ժամանակ Թեոֆիլը մահացու վերափոխվեց կաղակնե-  
րի ձեռքով և մեռավ հիվանդանոցում:

Այդ ժամանակ Անդրկովկասում տեղի ունեցավ  
առաջին պառակտումը մեր կաղմակերպության մեջ:  
Կուսակցությունը բաժանվեց մենչեվիկների և բոլ-  
շևիկների: Մինչև Նոյ Ժորժանիայի դալը, բոլոր  
մենչեվիկները, սկսած Չխեյիձեյից մինչև Ռամիշվիլին,  
ներկայանում էին իրրև հաստատակամ բոլշևիկներ  
և կրճերներին զարկում էին վրդովմունքից, կարգա-  
լով մենչեվիկյան հոգվածները: Իսկ Նոյ Ժորժանի-  
այի և նրա ամենահավատարիմ ողջական Արչիլ Չա-  
փարիձեյի (հետագայում 2-րդ Դումայի անդամ) դա-  
լուց հետո նրանց աջողվեց շատ ինտելիգենտ պրոպա-  
գանդիստների դրավել իրենց կողմը. բացի դրանից,  
ճարպիկ գեմազողիայով նրանք դրավեցին բանվորնե-  
րի յեվ դյուզադիներին մի մասը:

Կուսակցության պառակտումն անդրադարձավ  
նաև իմ աշխատանքի վրա: Յերբ փետրվարին, զեմ-  
ստվային բանկետների ժամանակ, մենչևիկները, վո-  
րոնք Չերմ մասնակցում էին այդ բանկետներին, բե-  
րին իրենց թուուցիկները տպագրելու, յես կտրուկ  
մերժեցի նրանց հանձնարարությունը կատարել: Յես  
ասացի, թե տպարանն այլևս նրանց չի պատկանում,  
վորովհետև յես եմ ստեղծել այդ տպարանը, յես եմ  
գտել տառերը, իսկ մեքենաները պատկանում են  
կովկասյան միացյալ կոմիտեյին, վորը կանգնած է  
բոլշևիկյան պրոպոգորմայի վրա: Ինձ կանչեցին Ար-  
չիլ Չափարիձեյի մոտ: Նա թոքախտավոր էր: Ըս-  
կզբում նա փորձեց խաղաղ կերպով համոզել ինձ,  
հետո սկսեց հայհոյել յեվ վերջապես կատաղեց և րս-  
կսեց արյուն թքել: Յես նրան պատասխանեցի բավա-  
կան հանդուգն: Յես տվի մենչևիկներին միանդամայն  
անպետք դադդյահ յեվ փչրված տառեր:

Հետագայում մենչևիկները յերկար հետևում է-  
ին ինձ, վորպեսզի իմանան, թե վորտե՞ղ է իմ տը-

պարանը, վոր խլեն: Սակայն, չնայած բոլոր ջանքե-  
րին, նրանց չաջողվեց վորևե բան անել ինձ: Նրանք



Կոմոն իշխան Ծուլուկիձե կեղծ անվան տակ:



սկսեցին համողել բանվորներին ծեծել ինձ, բայց դը-  
բանից ել բան դուրս չեկալ: Յերկյուղ կրելով, վոր  
նրանք կարող են գտնել իմ սպարանը, յես համողե-  
ցի հայ յեկեղեցու մի սարկավազի կապալով տալ  
իր տունը, յեվ մենք այնտեղ սարքեցինք շատ լավ  
սպարան, տեղափոխելով հին դաղդյահը, տառե-  
րը և նյութերը: Այդտեղ մենք միանգամայն սպա-  
հով ելինք մենչևիկներից: Այդ սարկավազը, չնայած  
իր արհեստին, շատ ազնիվ մարդ էր և իսկական բնա-  
ծին սոցիալիստ, վորն իր բոլոր ուժերով ոգնում էր  
հեղափոխության գործին»:

1905 թվին, ինչպես հայտնի յե, ծավալվեցին  
հայ-թուրքական ընդհարումները: Անդրկովկասի դա-  
նազան քաղաքներում իշխանության խրախուսանքով  
կաղմակերպվեցին ջարդեր: Առանձնապես շատ ելին  
գոհերը Բաղվում: Այդ ընդհարումների ալիքը հասավ  
նաև Թիֆլիս: Թիֆլիսի հեղափոխական սոցիալ - դե-  
մոկրատական կաղմակերպությունը, վորը շատ մեծ  
ազդեցություն ուներ բոլոր ազգությունների լայն  
մասսաների վրա, չէր կամենում թույլ տալ արյուն-  
հեղություն: Բայց յերկու թշնամի կողմերին հարկա-  
վոր էր ցույց տալ զինված ուժ, առանց վորի դժվար  
էր աղբը նրանց վրա: Յեվ ահա հեղափոխական սո-  
ցիալ - դեմոկրատիան ստեղծեց իմբեր, վորոնց այն  
ժամանակ անվանում էին միլիցիոներներ: Ձգացվեց  
զենքերի պահասություն, մանավանդ հրացանների:

Հայ-թուրքական ընդհարումների առթիվ սո-  
ցիալ - դեմոկրատները\*) հրավիրած միտինգներից  
մեկում, բոլորի համար անապասելի կերպով յեկալ  
Թիֆլիսի նահանգապետը յեվ հայտնեց փոխարքա Վո-  
րոնցով - Դաչկովի անունից, թե կառավարությունը  
համաձայն է զենք տալ հեղափոխական կուսակցու-  
թյանը՝ ազգային ընդհարումների առաջն առնելու

\*) Մենչևիկների, վորոնք նախնական բանակցու-  
թյուններ էլին վարում այդ մասին փոխարքայի հետ:

համար, պայմանով սակայն, վորպեսզի այդ զենքն  
ոչտադործելուց հետո վերադարձվի: Շուտով հրա-  
տարակվեց նաև կովկասյան փոխարքայի համապա-  
տասխան հայտարարությունը 1905 թ. նոյեմբերի  
25-ին: Այդ հայտարարության 3-րդ կետում ասված  
էր.

«Սրան կից՝ նորին կայսերական մեծության  
կովկասյան փոխարքան, միանգամայն վստահելով  
բանվորական կուսակցության խաղաղ տրամադրու-  
թյանը, վորը նրանից խնդրել է զենք, վորպեսզի խա-  
ղաղացնի Թիֆլիսում սկսված հայ-թուրքական ընդհա-  
րումները, միջոցներ ձեռք առնելով այն վերացնելու  
համար, հնարավոր համարեց տալ չեզոք ազգու-  
թյունների բանվորներին՝ բանվորական կուսակցու-  
թյան ընտրությամբ յեվ նրա յերաշխավորությամբ՝  
500 հրացան»:

Փոխարքայի յեվ նահանգապետի գործողու-  
թյունների իսկական իմաստն այնպես պարզ է կամե-  
լի համար, վոր նա նույնիսկ չի մեկնաբանում այն:  
Յարական իշխանության պրովոկացիոն քաղաքակա-  
նությունը լավ չըմբռնող մարդկանց մեջ այդ գործո-  
ղությունները կարող էլին առաջ բերել նույնիսկ վո-  
րոչ տարակուսանք: Մի՞թե իշխանությունն անկեղծո-  
րեն դիմեց հեղափոխական կուսակցությունների ող-  
նության:

Դիմենք դեպքերի մյուս վկա ընկ. Ֆ. Մախարա-  
ձեյի հիշողություններին:

«Վոչ վոք չգիտեր, թե ինչպիսի նպատակների  
յեր հետամուտ կովկասյան բարձր իշխանությունը,  
դիմելով այդպիսի առաջարկով Թիֆլիսի բանվորնե-  
րին, — պատմում է ընկ. Մախարաձեյն. իսկապե՞ս  
նա կամենում էր ցույց տալ իր հոգատարությունը  
ժողովրդի վերաբերմամբ, անկեղծորեն ձգտո՞ւմ էր  
դադարեցնել այդ մղձավանջային յեվ վրդովեցու-  
ցիչ կոտորածը, թե՞ նա ուներ դարձյալ յետին մըտ-



քեր. որինակ՝ այն միտքը, թե տարբեր ժողովուրդների բանվորները կկուլեն իրար հետ զենքերը բաժանելու հողի վրա, կհարձակվեն միմյանց վրա յեւ այդ պիտով հեղափոխական կազմակերպութիւնները կամ բոլորովին կլօնջնացվեն, կամ կլծուլանան այն աստիճան, վոր անկարող կլինեն շարունակել կռիվը: Մեր կարծիքով, վերջին յենթադրութիւնը հիմքից գուրկ չէ: Դրա սպացուցը մենք կրերենք ներքեւում, բայց ինչպիսի յել լինեյին իշխանության մտադրութիւնները, միանգամայն անմտութիւն կլիներ հրաժարվել նրա առաջարկից: Բացի այդ, նահանգապետը հայտնեց, թե զենքերը ստացականով կտան միայն Խիդոր Ռամիշվիլուին\*):

«Իրոք, Թիֆլիսի զինանոցը տվեց բանվորներին զենքերի ընդհանուր քանակութիւնից միայն 500 բերդան հրացան, վորոնց կեսն անպետք գուրս յեկավ, և 40.000 փամփուշտ: Դա առաջին զեպքն էր այն ժամանակվա Ռուսաստանում, յերբ ինքնակալութիւնը զենք էր տալիս հեղափոխական կազմակերպութիւնը: Ձիւնված բանվորներին հանձնարարվեց պաշտպանել Թիֆլիսի ազգաբնակչութիւնն, առանձնապէս այն շրջաններում, վորոնք վտանգավոր էյին հայ - թուրքական ընդհարումների հնարավորութիւն իմաստով: Վոստիկանները բոլորովին անհայտացան փողոցներից: Տեղ-տեղ անգործ կանգնած էյին գորբերը: Այսպիսով քաղաքի ամբողջ պաշտպանութիւնը փաստորեն անցավ բանվորական կազմակերպութիւնն ձեռքը: Դա, իհարկէ, գուր չեկավ Թիֆլիսի սև-հարյուրակայիններին, «հայրենասերներին» յեւ սպաներին: Նրանք պահանջեցին իրենց միտինդները մեկում իշխանութիւնն ներկայացուցչին, նահանգապետին յեւ խոտիվ կերպով հարձակվում էյին նույնիսկ վորոնցով - Դաշկովի վրա, վորը զինեց ցարէլ թշնամի բան-

\* Խիդոր Ռամիշվիլին վրացական հնադուլն գումայի անդամ:

վորներին: Նրանք պահանջում էյին, վորպէսզի իշխանութիւնն անմիջապէս յետ վերցնի զենքերը»:

Բայց ահա ժամանակը յեկավ կատարելու զենքերն իշխանութիւններին հանձնելու մասին կնքած համաձայնութիւնն կետը: Ընկ. Մախարաձեն այսպէս է բնորոշում դրութիւնը.

«Կառավարութիւնը կտրականապէս պահանջեց Ռամիշվիլուց վերադարձնել զենքերը: Դա թելադրում էյին սև-հարյուրակային սպաները յեւ «հայրենասերները» կուսակցութիւնը: Հարցը փոխադրվեց բանվորների քննութիւն: Բանվորների խոշոր մեծամասնութիւնն՝ առանց ֆրակցիաների խորութիւնն յեւ գլխավորապէս բուլճեիկները կանգնած էյին այն տեսակետի վրա, թե զենքերը վերադարձնելը կլինի ուղղակի հանցանք բանվոր դասակարգի յեւ հեղափոխութիւնն հանդէպ: Իսկ մենչեիկները պարագլուխներն ապացուցում էյին, թե զենքերն ստանալու ժամանակ նրանք ազնիվ խոսք են տվել յեւ այդ խոսքը նրանք պարտավոր են կատարել: Մենչեիկները վերջին պատճառաբանութիւնն այն էր, վոր յեթե նրանք չվերադարձնեն զենքերը, իշխանութիւնները կձերբակալեն Ռամիշվիլուին: Իսկ բուլճեիկները պնդում էյին, թե վոր ազնիվ խոսքի մասին կարելի յե խոսել նենդ կառավարութիւնն վերաբերմամբ: Այդպիսի զեպքերում անտեղի յե խոսել պատվի մասին, այլ հարկավոր է հիշել միայն, վոր հեղափոխութիւնն բախտը վտանգի մեջ է: Իշխանութիւնն ունի մեծ քանակութիւն մը գորբեր յեւ զենքեր բանվորները զեմ, մինչդեռ բանվորները գուրկ են այդ բոլորից: Այդ պայմաններում նրանք չպետք է վերադարձնեն զենքը: Ինչ վերաբերում է Ռամիշվիլուին, բանվորները խորհուրդ են տալիս նրան տեղափոխվել բուլճեիկյան շրջանը, ուր կառավարութիւնը վոչ մի զեպքում նրան չի ձերբակալի: Հարկավոր է նկատել, վոր



ղենքի հարցում բանվորների մեծամասնութունը բընադորեն պաշտպանում էր բոլշևիկներին:

Վերջիվերջո այդ հարցն ստացավ կոմպրոմիսային լուծում. պետք է վերադարձվեյին միանշանակ անպետք հրացաններ:

Դժբախտաբար, այդ վորոշումը չգործադրվեց: Կառավարությունը յետ ստացավ 350 հրացան, մնացածները մնացին հեղափոխականների ձեռքում միայն ա՛յն պատճառով, վոր բանվորները հրաժարվեցին հանձնել: Այդ զենքերի պատմությունը մի անգամ ևս բացեց մենչևիկների տակտիկան, վորոնք կարծում էին, թե հեղափոխության հաղթանակի համար վոչ մի անհրաժեշտություն չկա զինել բանվորներին, հետևաբար չկա յեվ զինված ապստամբության անհրաժեշտությունը\*):

Զենքերի այն մասը, վոր մնաց բոլշևիկներին մոտ, պահում էր ընկ. Կամոն. պահեստը նա սարքեց այն աստիճան գաղտնի, վոր նրա գոյություն մասին զիտեյին միայն Կամոյի ամենամոտիկ բարեկամներն ու ընկերները:

Կամոն իր կենսագրականում չի խոսում, թե ինչպես վերջացավ հրացանների հարցը յեվ ինչպե՞ս կազմակերպեց ինքը պահեստը: Դա գուցե բացատրվում է նրանով, վոր նա չկարողացավ մինչև վերջ գրել իր հիշողությունները: Բայց հայ - թուրքական ընդհարումները գրավում են նրա համառ ուշադրությունը: Իբրև իսկական հեղափոխական, նա այդ ընդհարումները քննում է բացառապես հեղափոխության վնասի կամ հաղթանակի տեսակետից յեվ իրեն հատուկ յեռանդով կովի յե նետվում հեղափոխական ուժերի այդ վատառողջ շլատման դեմ:

Վոչ մի վարկյան Կամոն չի կասկածում հայ-թուրքական անհամաձայնությունների իրական

\* ) Ֆ. Մախարաձե - «Հեղափոխական շարժումն Անդրկովկասում՝ 1905 թվին»:

պատճառների մեջ: Յեվ չնայած սոցիալ - դեմոկրատական կուսակցության պառակտմանը, չնայած ազգայնական տարրերի արշավին, նա համառությունը պնդում է, թե հեղափոխությունն աճում է յեվ ամրանում: Նրա պատճառաբանությունները ինչպես միշտ, պարզ են, համարյա միամիտ, բայց զարմացնում են իրենց ակներեվությունամբ նույնիսկ քիչ պատրաստված յեվ յետամնաց ունիչներին:

1901 թ. ցույցը կարողացավ շարունակվել 3 րոպեյից վոչ ավելի, իսկ այժմ, 1905 թվին, մենք ցույց ենք անում 10 րոպեյից ավելի յեվ վոչ վոք մեղ ձեռք չի տալիս, — այդպես էր ասում Կամոն իր «ասալին ու վերջին» հրապարակային ճառի մեջ, վորի մասին կիտսենք ներքևում:

1905 թ. փետրվարին, տեղի ունեցավ կատաղի հայ-թուրքական կոտորած Բագվում և ուրիշ տեղերում. կոտորածը վերջանալուց հետո, յերբ զինադաշար տեղի ունեցավ, Թիֆլիսի հայերն ու թուրքերը հավաքվեցին Վանքի յեկեղեցու բակում: Այդ ժողովում արտասանվեցին ճառեր յեվ մահմեդական հոդեվորականությունը յեղբայրացավ հայ հողեվորականությունից հետ: Դա յեղավ փետրվարի 14-ին:

Բոլշևիկները վճռեցին ուղադործել այդ դեպքը՝ տարածելու իրենց թուրքիկները, վորոնց մեջ բացատրված էյին հայ-թուրքական կոտորածի պատճառները, ցարական ինքնակալության գործակալներ է այդ զարդիկ պրոֆոկացիայի էյուլթյունը: Այդ նպատակով ընտրվեցին մի խումբ ընկերներ՝ Կամոյի գլխավորությունամբ:

«Հավաքված էյին մոտ 10-000, գուցե յեվ մոտ 15-000 մարդ, — պատմում է ընկ. Կամոն: Ազգային պարազուլներն արտասանեցին իրենց ճառերը... Ինձ աշողվեց այդ որը տարածել 23-000 թուրքիկ, վորոնք ուղղված էյին այդ կոտորածի դեմ:



Միտինգից հետո ամբոխը վճռեց զնալ թուրքերի գերեզմանատուն, ուր նույնպես հրավիրված էր միտինգ: Ճառերից հետո ժողովրդական ամբոխները Յերևանյան հրապարակի միջով մտան Դվորցովայա փողոցը յեվ Գոլովինսկի պողոտան (այժմ Ռուսթավելի պողոտա) դեպի վրացական Քաչվեթի յեկեղեցին: Յրելով բոլոր թուրքիկները և տեսնելով, վոր հասարակութեան խոշոր գանգվածը ցույցով անցնում է դիտավորապես փողոցներով, յես համոզեցի ընկերներին մի կերպ գտնել թեկուզ վորևէ կարմիր դրոշակ և կազմակերպել իսկական սոցիալիստական նույց:

Ընկերները հավանեցին իմ միտքը և յես վագեցի Յերեվանյան հրապարակում գտնվող քարվանսարան: Յես մտա այնտեղ ճոթեղեն վաճառողի մոտ, վորի հետ ծանոթ եյի, յեվ պահանջեցի նրանից 3 արջին կարմիր կտոր, վորի վրա կավիճով գրեցինք մեր լուսնագները. «Կորչի ինքնակալութիւնը», «Կեցցե՛ սոցիալիզմը», «Կեցցե՛ Ց-ժամյա բանվորական ուրը»: Հենց այդ խանութի մի անկյունում յես գտա հաստակի խողանակ: Կոտրելով փայտը, յես շինեցի բավական լավ դրոշակ: Թագցրի այդ դրոշակն իմ բավական լայն վերարկույի տակ յեվ հասա ամբոխին կուկասյան բանակի շտաբի մոտ՝ Դվորցովայա փողոց դուրս գալու ժամանակ: Այդտեղ ինձ շրջապատեցին մի քանի անձնվեր ընկերներ յեվ յես բարձրացրի դրոշակը, վոր այնքան էլ բարձր չէր ամբոխի հանդեպ-փայտը փոքր էր: Բայց հետո մեզ մոտեցան յերկու բարձրահասակ յերիտասարդ յեվ յես կանգնեցի նրանց ուսերի վրա, ու այդպիսով մենք հասանք փոխարքայի պալատին: Այստեղ ամբողջ հասարակութիւնը, վոչ պակաս, քան 10.000 մարդ, կանգ առավ յեվ յես իմ կյանքում առաջին ու վերջին անգամ ճառ արտասանեցի: Յես սկզբում խոսում եյի վրացերեն, իսկ հետո կտրտված ուսերեն յեզվով: Յես բացատրում եյի կոտորածի նշանակութիւնը: Այնուհե-

տել մենք դիմեցինք դեպի Քաչվեթի յեկեղեցին: Այդտեղ նույնպես կանգ առանք յեվ ճառեր արտասանեցին ինչպես իսկական, այնպես յեվ փոքր ինչ կարմիր ազգայնականների դեմ: Այդ բոլոր ազգայնականները, ինչպես վրացական, այնպես յեվ հայ դաշնակները, վորոնց թիվն ամբոխի մեջ մեծ էր յեվ վորոնք յեռանդով ճառում եյին Վանքի յեկեղեցու բակում, այժմ անհայտացել եյին: Յես չմոռացա մատնանշել նրանց այդ անհայտացումը, ընդդէտով, վոր նրանք վախենում են կարմիր դրոշակից՝ ինչպես բուն վախենում է ցերեկվա լուսից: —

Մեզ աջողվեց հասնել Սուրբատսկի բազարը: Այդտեղ յես նորից ճառ արտասանեցի, հիշեցնելով 1901 թ. առաջին ցույցի մասին, յերբ դրոշակակիր Առաքիլ Ոկուաշվիլու հետ մենք չկարողացանք մնալ նույնիսկ 3 րոպե յեվ ցույցը վայրկենապես-ցրեցին, իսկ այժմ անհայտացան 10 րոպե յե մենք ցույց ենք անում կարմիր դրոշակով: անհայտ ժամանակից սկսած ինչքան է աճել յեվ ամբացել հեղափոխական շարժումը:

Մենք մոտեցանք «Կավկաս»\*) թերթի տպարանին, վորպեսզի աշխատանքից հանենք տպարանական բանվորներին: Յերբ նրանք միացան մեզ, մենք սկսեցինք քննել, թե սրանից հետո ի՞նչ պետք է անենք — ցրվե՞նք, արդյոք, մեր աները, թե՞, դնանք բանվորական թաղամասերից մեկը՝ Նախալովկա: Այդ հարցը քննելու ժամանակ մեր շուրջը պտտվում եյին վստիկաններ, վորոնք ամբողջ ժամանակ ուղեկցում եյին ցույցին՝ ինչպես լեզալ հուղարկավորութեան: Հանկարծ թաղամասի վոստիկանական վերահսկիչը նետվեց հասարակութեան մեջ յեվ կանգնեց իմ յետևից: Նա բռնեց իմ վերարկույից յեվ փորձում էր իջնել ընկերներին ուսերի վրայից: Յետ նայելով,

\*) «Կավկաս»-ը կառավարական պաշտոնական թերթ էր:



յես վոտըով հարվածեցի նրա ատամներին: Նա ընկա՞վ մեջքի վրա, իսկ յես՝ յերեսիս: Հենց այդ րոպեյին յետեից մեզ վրա հարձակվեցին կաղակները: Ընկերներս ցրվեցին, իսկ յես յե՞վ վոստիկանական վերահսկիչը մնացինք կաղակները ձիերի վոտքերի տակ, վորոնք իրենց տերերից ավելի մարդասեր էյին յե՞վ մեզ չարորեցին:

— Յերբ 100 կաղակների խումբն առաջ վաղեց ինձ մնաս չպատճառելով, յես նետվեցի ցանկապատի այն կողմը, վորը գտնվում էր Ակոպովի յերկաթեղենի պահեստից դեպի աջ: Յերբ յես ցատկում էյի ցանկապատի վրայով, կաղակներից մեկը հասավ ինձ յե՞վ կամենում էր թրով հարվածել գլխիս: Բարեբախտաբար, նա միայն թեթև վերալորեց իմ մատը: Ինձ աջողվեց փրկվել: Յատկելով ցանկապատի վրայով և դուրս գալով քաղաքի մյուս մասը, յես մի ծանոթից վերցրի կինտոյի զգեստ: Յե՞վ յե՞վրոպական զգեստի փոխարեն հագա լայն շալվար, արխալուզ յե՞վ անթիւք ներքնագզեստ: Չե՞վացնելով ինձ հարբած, գնացի Սուրբատակի բաղարը յե՞վ մտա պանդոկ: Այդտեղ յես պահանջեցի գինի, իմեցի մի քանի բաժակ յե՞վ տատանվելով դուրս յեկա փողոց ու սկսեցի սուլել կառապանին: Յերբ կառապանը մոտեցավ, յես մեկնեցի Վիննի կոչված շարքերը: Այդտեղ հրապարակում յե՞վ փողոցներում կանգնած էյին զբաղուններ և կաղակներ, իսկ վոստիկանությունը վորոտում էր հոնտորին յե՞վ զբոշակակրին:

Մոտակա նրբափողոցներով յես աջողությամբ հասա իմ բարեկամ պանդոկատիրոջ մոտ, իսկ այնտեղից Խլեբնայա կոչված հրապարակը, ուր գտնվում էր ընկերներիցս մեկի տունը՝ մեր հանդիպման բնակարանը:

Այդ բնակարանը յես մտա յետևի մուտքից: Բընակարանում ինձ չճանաչեցին յե՞վ հարցրին — ինչ եմ սւզում: Յես ասացի, թե վերջերս յես նրանց համար

ձուկ եմ բերել յե՞վ յեկել եմ դրամ ստանալու: Կինտոյի զգեստն այն աստիճան վոխել էր իմ արտաքինը, վոր նույնիսկ ընկերներս չկարողացան ճանաչել ինձ յե՞վ առանձին ուշադրություն չդարձրին ինձ վրա: Յես նստեցի սենյակում գտնվողների կողքին: Այդտեղ էր, ի միջի այլոց, մի հայ բանաստեղծ, վորը պատահմամբ ներկա յեր յեղել ցույցին: Նա վոզեւորված պատմում էր, թե ինչ վոր մի յերիտասարդ, նստած ընկերների ուսերին, շատ զեղեցիկ ճառ արտասանեց: Թե վորչափ զեղեցիկ էր իմ ճառը, յես չեմ կարող դատել: Նրանք, վորոնք ինձ ճանաչեցին, հարցրին, — նման չե՞, արդյոք, այս կինտոն ճառ արտասանող յերիտասարդին, — բայց նա այնուամենայնիվ չճանաչեց ինձ: Ամենքն սկսեցին ծիծաղել: Յես ստիպված յեղա հանել իմ դիմակը յե՞վ պատմել, թե ինչպես անցավ ցույցը:

Ի միջի այլոց, մեր կուսակցության Յորդ համագումարում Միխա Բարսովը\*) մասսայական շարժման փամանակ վորոշ մոմենտներ ուղտազործելու մասին արտասանած իր ճառում՝ ողտվեց այդ որինակից»:

Այդ դեպքի մասին ընկ. Ս. Խանոյանը հիշում է հետևյալը. «Նլեբնի հրապարակը, ուր ապրում էր մեր ընկերներից մեկը յե՞վ ուներ զաղտնի բնակարան, վերաբերում է ինձ յե՞վ այնտեղ աշխատում էր ՌՄԴԻԿ միացյալ կոմիտեն»:

Յերբ մտավ Կամոն կինտոյի հազուստով, ընկերներն սկզբում չճանաչեցին նրան, բայց հետո բարձր ծիծաղեցին, իսկ ընկ. Ստալինը սովորականի նրման բացականչեց «Կամո», դիտմամբ շեշտելով «ա» տառը:

Հանգստացնելուց հետո, Կամոն պատմում յե՞վ զեկուցում է իր արարքի մասին, հոհոալով նկարա-

\*) Միխա Բարսովը. ընկ. Միխա Յիսակայան է:



դրելով, թե ինչպես նա հիմարացրեց վոստիկաններին յեվ ինչպես փախավ նրանցից:

— Հարկավոր ե ողտագործել ցուլցը, — առաջարկեց ընկերներից մեկը: Կամոն ուրախացավ:

Ընկ. Ստալինը վերցրեց դրէչը յեվ գրեց թուղցիկ հայ — թուրքական կոտորածի մասին, Վանքի յեկեղեցու բակում նրանց «յեղբայրանալու» յեվ այն ցուլցի մասին, վոր սարքել եր Կամոն

Կամոն վերցրեց ընագիրը յեվ կարդաց:

— Այս ի՞նչ ես գրել, — շփոթված հարցրեց Կամոն Ստալինին:

Նա կամենում եր, վորպեսզի թուղցիկի մեջ գրված լինի բազմահազար ու վիթխարի ցուլցի մասին:

— Հավատացնում եմ քեզ, վոր ցուլցին մասնակցում եյին 10.000 մարդ, — ասում եր Կամոն:

Ստալինը նայում ե ժպտում եր.

— Ձառանցում ես, — ասում եր Ստալինը, չափելով Կամոյին վոսքից գլուխ:

— Գոնե 5.000: Գրի՛ր, վոր մասնակցում եյին 5.000 մարդ:

— Ձառանցում ես, — կրկնում ե Ստալինը:

Խոսակցութիւնը վերջանում ե նրանով, վոր Ստալինը համաձայնում ե փոխել «մի քանի հարյուր» խոսքերը «խիտ չարքերի», առանց «հարյուրավոր ու հազարավոր» բառերի:

Համաձայնելով դրան, Կամոն վերցնում ե թուղցիկը ե վագում ե շարելու «իբ» տպարանում:

Հեղափոխական արևը ավելի բարձրացավ ե Կամոյի ողջութեամբ թագցրած զենքը հարկավոր յեղավ ավելի շուտ, քան յենթադրում եյին նույնիսկ բոլշեփիկները: Դա յեղավ դեկտեմբերին, Մոսկվայի ապստամբութեան համարյա արաջին օրերին:

1905 թ. դեկտեմբերի 7-ին Մոսկվայում կուսակցութիւնը վճռել եր սկսել ընդհանուր դործադուլ. դեկտեմբերի 7-ին կանգ առան Մոսկվայի հանդուլցի

յերկաթուղիները: Գործադուլ հայտարարեցին նաև տպարանները, լրագրները դադարեցին լույս տեսնել: Գործարանները, ֆաբրիկաները, հիմնարկութիւնները, դպրոցները ե նույնիսկ մանր արհեստանոցները



Կամոն 1905 թվին

րը դադարեցին աշխատանքը: Գործադուլավորները թիվը հասավ մի քանի հարյուր հազարի:

Իսկ դեկտեմբերի սկզբին ընդհանուր դործադուլի հարցը լուծելու համար Բազմում կայացավ յերկաթուղայինների պատվիրակների խորհրդակցութիւն-Մնդրկովկասի ներկայացուցիչների մասնակցութեամբ: Այդ խորհրդակցութիւնը վճռեց միանալ ընդհանուր քաղաքական դործադուլին: Դեկտեմբերի 12-ին կանգ առավ յերթևեկութիւնը Մնդրկովկասյան յերկաթուղիներում: Գործադուլավորները գրավեցին Քիֆլիս կայարանը ե ամբողջ Մնդրկովկասյան յերկաթուղին: Յերկաթուղու պաշտպանութիւնը



հանձնվեց դործադուլավորներին, ղինված բանվոր - միլիցիոներներին:

Շուտով դործադուլին միացան պետական մյուս հիմնարկությունների, քաղաքային ինքնավարութեան և սպարանների ծառայողները: Ապա դործադուլային բյուրոյի վորոշմամբ, դործադուլը տարածվեց բոլոր առևտրական հիմնարկությունների վրա, բացի մթերային կրպակներից և խանութներից:

Իշխանությունը պատասխանեց դրան դեկտեմբերի 15-ին հայտարարելով ամբողջ Անդրկովկասը պատերազմական դրութեան մեջ:

Ահա թե ինչպես է հաղորդում այդ դեպքերն ընկ. Ֆ. Մախարաձեն:

«Թիֆլիսում, պատերազմական դրություն հայտարարվելուց հետո, դրությունը չափազանց սրվեց: Փողոցներում և հրապարակներում չըջում էին կառավարական ղինված պահակախմբեր և ամբողջ գորաչարքեր: Շատ ու քիչ կասկածելի անձանց անխտիր կանգնեցնում, խուզարկում և ձերբակալում էին: Միախնդներ կայացնելն անհնարին դարձավ: Գործում էր դիտավորապես դործադուլային բյուրոն: Հարցը վոչ թե ընդհանուր ղինված ապստամբություն կազմակերպելու մասին էր, այլ ինքնապաշտպանութեան մասին: Առանձնապես այդ ինքնապաշտպանությունը վերաբերում էր Նաճալաղելի (Նախալովկա) բանվորական չըջանին: Բանվորները վճռեցին պաշտպանել այդ չըջանը: Կազակների անսպասելի հարձակումից իրենց ազատվելու համար, բանվորներից կազմված պահակախումբը պետք է կանգնած լիներ Նախալովկայի բլրի վրա:

Դեկտեմբերի 17-ի գիշերն այդ տեսակ պահակախմբերից մեկն ստիպված էր ընդհարվել կառավարական դորքերի հետ, վորոնք բաղկացած էին կազակներից, ժանդարմներից և հետևան ղինվորներից: Այդ ընդհարման համար արտաքին առիթ ծառայեց

հետևյալ հանգամանքը. դեկտեմբերի 17-ին մի քանի ղինված բանվորներ ձերբակալեցին 3 շտրեյկբրեխների (աղբով ոռոտ), վորոնք յեկել էին կայարան աշխատելու: Նրանք բերին Նաճալաղելի: Բայց Նաճալաղելու վրա հարձակվելու իսկական պատճառն այլ էր: Կառավարությունը համոզված էր, թե բացի նրանից, վոր Նաճալաղելին բնակեցված է հեղափոխական բանվորներով, այնտեղ կան նաև ամեն տեսակ ղենքերի ու ոռոմբերի պահեստներ: Իշխանությունը կամենում էր գտնել այդ պահեստները և բռնադրավել: Նա ոգտվեց վերոհիշյալ բանվորների ձերբակալությունից և դեկտեմբերի 18-ի գիշերը հարձակվեց Նաճալաղելու վրա: Հասկանալի չէ, բանվորները պատրաստված չէին այդ հարձակմանը: Միակ բանը, վոր ունեյին նրանք, դա անհամեմատ վտանգավոր տեղերում նշանակված պահակներն էին:

Չորքերը վաղ առավոտյան չըջապատեցին Նաճալաղելին: Յերբ հետևակ դորախմբերից մեկը փորձեց մտնել Նաճալաղելի, նա ընդհարվեց բանվորների պահակախմբի հետ: Սկսվեց հրացանաձուլություն: Բանվորների պահակախումբն ընկավ դորամասերի միջև և արդեն չէր կարող դուրս գալ ողակից: Նա համարյա ամբողջովին վոչնչացավ: Ազատվեցին միայն 3 բնիկեր, վորոնք վիրավորվել էին: Սպանվեցին Մինա Կալաձեն, Գեորգի Ելիավան, Պյոտր Յիևցաձեն, Վաստ Թվարաշվիլին, Իլիկա Նիմիձեն, Վանո Խուցիշվիլին (Խուցուարուլի), Տուխա Լաղիաշվիլին, Գրիգոր Ջաշին, Վանո Խվարաձեն, վիրավորվեցին Կ. Դվալին, Կ. Չագանիձեն և Կամոն: Սպանվածների դիակները սարսափելի այրանդակված էին: Հետևյալ օրն ամբողջ Թիֆլիսի բանվորները յեկան հարգելու դադանաբար սպանված ընկերների հիշատակը: Պատկերը սոսկալի յեր և առաջ էր բերում վրդովմունք: Ա-



մենքը համակված էյին վրեժխնդրության ծարա-  
վով<sup>\*)</sup>»:

Պաշտոնական «Կավկազ» թերթը (հ. 313, 1905  
թ., դեկտեմբերի 20) այդ դեպքը նկարագրում է հե-  
տևյալ կերպ —

«Դեկտեմբերի 17-ի առավոտյան, Թիֆլիս կայա-  
ցանի զժի վրա անհայտ զինված չարամիտներ (30  
հոգի) բռնեցին 3 ուսու բանվորի, 2 սլաքավարի և մի  
կցողի, վորոնք ձեռնարկել էյին աշխատանքի, և տա-  
րան Նախարարի կանոնները, հայտնի չեր, վոր  
Նախարարի կանոնները ու զենքեր: Այդ պատ-  
ճառով հրամայեց խուզարկութուն կատարել, վորի  
համար դեկտեմբերի 18-ի առավոտը Նախարարի  
չըջապատվեց զորքերով:

Հետևակ զորախմբի վրա, վոր առաջ եր դնացել  
յեկեղեցու յետևի ձորը գրավելու համար, կրակ բա-  
ցին լեռան վրայից: Զորախումբն իր կողմից կրակեց:  
Միաժամանակ զինված մարզիկ սկսեցին կրակել մո-  
տիկ կանոնաձ զորքերի վրա, վորոնք կրակ բացին:  
Յերկու դեպքում չարամիտները, վորոնց վրա կրա-  
կում էյին զորքերը, ցիր ու ցան յեղան և թաղնվեցին  
մոտակա աներում:

Սպանվածներից մեկի մոտ գտնված է մի ուսու:

Յեկեղեցու տակ նկուղում խուզարկության ժա-  
մանակ գտնվեցին 7 մարդ՝ 8 ուսուքով և մի քանի հը-  
րացաններով. բացի այդ, սպանվածների մոտ, ինչ-  
պես և մի քանի շինութուններում, գտնվել են զեն-  
քեր:

Վոստիկանության տեղեկութունների համա-  
ձայն, մինչև ցերեկվա ժամը 3-ը Նավոզնայա փողո-  
ցում փոսերի մեջ գտնվել են 9 սպանված և 3 վերա-  
վորված»:

\*) Ֆ. Մախարաձե «Հեղափոխական շարժումն  
Անդրկովկասում 1905 թ.»:

\*\*\*

Սոցիալ-դեմոկրատական «Սոխվի» («Ճառագայթ») թերթը  
դեպքերի պատկերը հաղորդում է վերավոր-  
ված «միլիցոններեց» (բանվորներից) մեկի խոսքե-  
րով:

«Առավոտվա մոտավորապես ժամը 4-ն եր: Մենք  
բաժանվեցինք մի քանի խմբերի և սպասում էյինք  
հարձակման, վորովհետև վաղորոք մեզ տեղեկացրել  
էյին, թե իշխանութունները մտադիր են հարձակ-  
վել Նաճալաղեվի վրա: Լուսացավ, բայց մենք դեռ  
վոչինչ չէյինք տեսնում: Արդեն ցերեկ եր և մենք  
պատրաստվում էյինք ցրվել մեր տները: Բայց հան-  
կարձ մեզանից 4 սաժեն հեռու կանոնաձ ընկերներն  
սկսեցին փսփսալ և նայել լեռան վրա յերեկացող սև  
կետերին: «Կազակներ» — ազգակեցինք մենք և պատ-  
րաստվեցինք կովի: Մենք չէյինք կամենում առա-  
ջինը կրակել: Կազակները մեզ նկատեցին և սկսեցին  
կրակել: Մենք պատասխանեցինք համազարկով և ձի-  
երից գլորեցինք 3 կազակի: Մեզանից մեծ մասը պատ-  
կեց հովտում և այդտեղից շարունակեց կրակել: Սա-  
կայն, դեպի մեզ հակառակ կողմից մոտենում էյին  
դրաղուն զինվորներ, վորոնք նույնպես սկսեցին կրա-  
կել մեզ վրա: Մենք ընկանք ողակի մեջ: Կազակնե-  
րը գնդակահարում էյին մեր ընկերներին, սրախող-  
խող անում և անխնա ծեծում: Կազակները և դրա-  
ղունները խուզարկում և կողոպտում էյին սպանված  
ներին»:

Ինչպե՞ս փրկվեց ընկ. Կամոն մահից: Ճարական  
զորքերի հետ ընդհարվելու բուռն էյին ընկ. Կամոն կրա-



կող ընկերներէ մեջն եր: Նա վերապորովեց, ընկալ և մի կերպ իրեն ձգեց ձորը: Նա դիտեր, վոր մահն անխուսափելի թ, բայց չկորցրեց իր արիւթ յունը:

Նա վճռեց ձեռքներ իրեն պարզամիտ մարդ, վոր միանգամայն պատահամբ և ընկել այդ խառնաչիտ-թության մեջ:

Յերբ կազակները դտան Կամոյին ձորում, նա ու-  
ժասպառ եր յեղել և չեր կարող շարժվել: Կազակնե-  
րը տատանվեցին—սպանե՞լ նրան, թե՞ թողնել (կեն-  
դանի. մտածելով, վճռեցին կենդանի թողնել, բայց  
կտրել նրա քիթը: Կամոն հետադաշում պատմում եր  
Ս. Ի. Մեդվեդեվա—Պետրոսյանին, թե քիչց զրկվելու  
փտանգը նրան թիաց մահից ավելի սարսափելի: Այն  
միտքը, թե այդպիսի անդամահատությունից հետո  
նա արդեն յերբեք չի կարող կատարել անլեզալ աշ-  
խատանք, նրան ձգում եր մեծ հուսահատության  
մեջ:

Կամոյին բերին Նախալովկայում գրաված տնե-  
րից մեկը:

— Ապտամբվե՞լ կամեցար: Դեհ, յեկեք կախենք  
սրան, — վճռեցին կազակները և պատրաստվեցին  
կախելու: Բերին թուկ, կապեցին Կամոյին առաստա-  
ղի վրա շինված կեռից... Կամոն դալարվում եր մա-  
համերձ ջղաձգությունների մեջ:

— Գուցե և հանցավոր չե, —ասում ե կազակնե-  
րից մեկը, վորն՝ ըստ յերեմովյթին՝ մյուսներից փո-  
քրը ինչ բարի սիրտ ուներ:

Կամոյին իջեցնում են կեռից և նա վորոշ ժամա-  
նակ անզգա յե մնում:

— Ինչպե՞ս, նա նրանց հետ եր և այնտեղից փա-  
խալ: Թո՞ղ ինքն ասի:

— Ե՞ր, լսո՞ւմ ես. ասա, նրանց հետ եյիր, թե՞  
վոր:

— Վոչինչ չգիտեմ, յես գյուղացի յեմ, բան չը-  
գիտեմ, —պատասխանում ե Կամոն:

Կամոյին ստիպում են փորել իր դերեզմանը:  
Նա կամենում ե ապացուցել, թե՞ իրբև պարզամիտ  
գյուղացի՝ չի հասկանում, թե ինչ՞ գործով են նրան  
«բախտավորեցրել» և յեռանդով սկսում ե փորել:

Կազակները կասկածի յեն մտանովում: Ապա նը-  
րանք նորից դաշրանում են: Յերրորդ անգամ բար-  
ձրացնում են Կամոյին առաստաղ, բայց Կամոն ու-  
ներ կախվողի վորոշ փորձառություն: Նրան աջող-  
վում ե այնպես անել, փորպետի թուկը չսեղմի կո-  
կորդը. նա պարանի մեջ խրեց իր դունչը: Բացի  
այդ, պարանը հանկարծ կտրվեց և նա անզգա դրու-  
թյան մեջ իր ծանրությամբ ընկալ հատակին:

Լուսացալ: Սկսվեց որը և ծեծված, չարչար-  
ված, արյունըլա, Կամոյին հանգիստ թողին: Վո-  
րոշ ժամանակ անց՝ նրան փոխադրեցին Մեաեխի  
բանտը: Յերբ նրան տանում եյին փողոցներով, նը-  
րա կերպարանքն այնքան սոսկալի յեր, վոր անցորդ-  
ները կանգ եյին առնում փողոցներում:

Իհարկե, Կամոն դտնվելով բանտում, մտածում  
եր միայն թե ինչպես չուտով ծլկվի գահիճների ձեռ-  
քից: Հարցաքննության ժամանակ նա չեր հայտնում  
իր իսկական անունը, այլ ձեռացնում եր իրեն գյուղ-  
ացի Շանչիաչվիլի՝ Դիդոմի գյուղից (Թիֆլիսի մոտ):

Ինչո՞ւ անպայման Շանչիաչվիլի: Կամոն այդ ա-  
նունով իրեն անվանեց հետեյալ պատճառով: Բան-  
տում գտնվում եր վոմն Շանչիաչվիլի, վոր ձերբա-  
կալվել եր միանգամայն հասարակ գործի պատճա-  
ռով: Կամոն դեռ այն ժամանակ առանձին շնորհք ու-  
ներ դեպի ինքը դրավելու մարդկանց: Նկատելով,  
վոր յերիտասարդ Շանչիաչվիլին դիտե իր անունը,  
հարգանքով ե կրկնում այդ անունը և ամբողջովին  
նվերված ե հեղափոխության գործին, նա սկսեց նրա  
հետ մոտավորապես այսպիսի խոսակցություն:



— Այ թե ինչ, ընկեր, կկամենայի՞ր արդյոք, դու փոքր ինչ տուժել հանուն հեղափոխութեան:

— Հանուն հեղափոխութեան: Իհարկե: Բայց ինչպե՞ս կարելի չէ, նստած բանտում ինչ վոր հասարակ բանի համար, տուժել հանուն հեղափոխութեան: Ամեն մեկը կամենում է լինել հեղափոխական, բայց փոչ ամենքը կարող են լինել հեղափոխական:

Կամոն բռնեց նրա ձեռքը:

— Դու յերբեք չե՞ս տեսել Կամոյին:

— Տեսել եմ Նախարարի կողմ, միայն հեռվից: Նա ինձ թվաց բոլորովին յերիտասարդ:

— Գիտե՞ս ... Կամոն բոլորովին սպանված չէ: Նա կենդանի չէ: Նա այժմ բանտումն է, հենց այս բանտասենյակում, քո առջև:

— Դո՞ւ, դու—Կամո՞ն էս: Ե՛հ. յես այդպես ել գլխակի: Թեև այստեղ խոսում եյին, թե քեզ սպանել են, բայց յես չեյի հավատում: Ինչպե՞ս կարելի չէ սպանել Կամոյին:

— Լսի՛ր, ինչպե՞ս է քո ազդանունը:

— Շանչիաշվիլի:

— Դե՛հ, լսի՛ր, յեթե դու կամենում ես լինել իսկական հեղափոխական, դու կարող ես լինել այդպիսին նույնիսկ այստեղ բանտում: Դու կարող ես ինձ փրկել: Ինձ կախաղան կրարձրացնեն, անպատճառ կկախեն: Մի քիչ առաջ յես սպանեցի մի կազակի, իսկ անցյալում ուրիշ շատ գործեր եմ կատարել: Դորձը շատ պարզ է: Այստեղ բանտում մենք կփոխենք մեր գլխասաները: Ինձ այստեղ չեն ճանաչում, իսկ դու համարյա իմ ասրիքին ես: Դու կլինես Կամո, իսկ յես Շանչիաշվիլի: Քեզ այս օրերս կազատեն: Յես կհեռանամ քո փոխարեն: Իսկ դու հետո կհայտնես, վոր դու Շանչիաշվիլին ես: Նրանք քեզ կպատժեն միայն փախուստին ողնելու համար: Դա այնքան ահարկու չէ:

Յերիտասարդը համաձայնեց: Շուտով Շանչիաշվիլուն կանչեցին քննիչի մոտ, Կամոն ձևացրեց իրեն պարզամիտ մարդ և պատմեց մանրամասն, թե ինչպես ընկավ կազակների ձեռքը: Ռուսաձեշի ղեղատանը (Նախարարի կողմ) հերթապահութեանից հետո, ուր իր թե նա ծառայում է աշակերտի պաշտոնով, նա գնում էր տեսակցելու իր հարմնացույլի հետ և ընկնում է այդ անկարգութեան մեջ: Յերբ սկսվեց հրացանաձուլութունն ու իրարանցումը, նա վաղեց մյուսների յետևից, բայց փախչելիս նա ընկավ և իր գլուխը խփեց սուր քարին, վորով և բացատրվում է նրա վիրակապը:

— Դուք ճանաչո՞ւմ եք Կամոյին:

Ինչպե՞ս չգիտեմ կամա: Ո՞վ չգիտե կամա\*):

— Վորտե՞ղ եք դուք նրան տեսել:

— Հը... ով՞ չէ տեսել կամա, Դուք ևս պետք է վոր հաճախ տեսած լինեք: Չե՞ վոր դա ուտելու բույս է:

Քննիչը բարկացավ բանտարկյալի բթամտութեան վրա, բացատրելով, թե խոսքը վոչ թե կանաչի մասին է, այլ մարդու, այն ել հեղափոխականի մասին:

Մի քանի ժամից հետո Կամո-Շանչիաշվիլուն, իբրև պատահամբ ձերբակալվածի, կանչեցին բանտային զբասենյակը և հայտնեցին ուրախալի լուր-ազատելու մասին:

Մետեխի լայն դռները բացվեցին և նորից փակվեցին: Կամոն ազատ էր: Ինչպե՞ս էր նա ծիծաղում ժանդարմների հիմարութեան վրա:

Սակայն բանտից Կամոն մենակ դուրս չեկավ, այլ քաղաքապահ վոստիկանի ուղեկցութեամբ, վոր պետք է հանձներ նրան ձեռքից ձեռք այն թաղային վոստիկանատանը, ուր գրված էր Շանչիաշվիլին: Կամոն խնդրեց քաղաքապահ վոստիկանին թույլ տալ նրան

\* ) Կամա—վրացերեն նշանակում է սամիդ:



մենակ զնալ կառքով մինչև թաղային վոստիկանատուն, վորովհետև իբր թե նրան անհարմար էր յերեվալ փողոցներում ձերբակալվածի տեսքով: «Իմ՞չ կմտածեն իմ լավ ծանոթները»: Քաղաքապահ վոստիկանը համաձայնեց հավանորեն վորոշ վարձատրությամբ - և հոժարակամ զնաց ելեկտրաքարշով, իսկ Կամոյի հետքը կորավ: Նա կառքից իջավ այնպես, վոր նույնիսկ կառապանը չնկատեց նրա անհայտանալը:

Կամոյի 1905 թ. ժամանակաշրջանի կենդանի պատկերը պատմեց դատարանում նրան պաշտպանող Ա. Բեբուլիշվիլին, վորն այն ժամանակ բուլչեիկ էր: «Ընկ. Կամոյի հետ յես ծանոթացա 1905 թվին: Քուլթայիսում, քաղաքից դուրս, Չիոնկիայի տանը 2 որ շարունակիող բուլչեիկների կոնֆերենցիայից հետո, ընկ. Միլյա Յխակայան իր հետ Թիֆլիս տարավ ինձ և մի քանի ընկերները՝ աշխատելու համար: Յես Թիֆլիս յեկա ողոստոսի 29-ին: Այդ թիվը իմ հիշողության մեջ կմա ընդմիջա, վորովհետև այդ որը, Սոյուլակում ընակիող Թիֆլիսի բուրժուազիայի նախաձեռնությամբ կազմակերպված էր սպանդ քաղաքային նախկին դումայի շենքում: Հետևյալ որը մենք ընկերները չըջանում քննում էյինք նախորեյին տեղի ունեցած դեպքերը և այդտեղ յես առաջին անգամ տեսա ընկ. Կամոյին: Նա սաստիկ հուզված էր, այս ու այն կողմն էր ընկնում, զայրանում և պահանջում անմիջապես հերոսական զործողություններ: Նրա զայրացած ու վրդովված դեմքը մինչև այժմ կենդանի կանդնած է իմ աչքերի առջև»:

Այդպես էր նա, այդպես էլ մնաց մինչև վերջ՝ մինչև իր անմիտ կորուստը:

«Ազգային գրադարան»



NL0184296





ԳԻՆԸ 50 Կ.

5

567

Բ. ԲԻԲԻՆԵՅՏՎԻԼԻ

**Կ Ա Մ Օ**

(Օտրывки)

Ու արմ. յա.  
Իադ. գազ. «Սրոլետար»